

# ՄԻ ԿԱՐԴԱՐԵԼ

ՅՈՎՅ. ԹՈՒՐԱՆԵԱՆ.



# ՄԻ ԿԱԹԻԼ ՄԵՂՐԸ

Մի գիւղացի իրենց գիւղում  
 Խանութ սարքելքան էր ծախում:  
 Օրւան մի օր մօտիկ գիւղից,  
 Մահակն ուսին, շունն ետեից  
 Ներս է մտնում մի զբո չոբան.  
 —Բարի օր քեզ, այ խանութպան,  
 Մեղրը չունես,  
 Մի քիչ տաս մեզ:  
 —Ունեմ, ունեմ, չոբան ախալէր.  
 Ամանդ ուր է, ամանըդ բեր,  
 Ինչ տեղից որ ինքդ կուզես,  
 Էս սըհաթին քաշեմ տամ քեզ:

Էսպէս հանգիստ, էսպէս սիրով,  
 Մեղրից անուշ լաւ խօսքերով  
 Մեղր են քաշում. մին էլ յանկարծ  
 Մի կաթ մեղրը ծորում է ցած:  
 —Տը զզ, էն կողմից մի ճանճ գալի,  
 Կաթիլին վեր է գալի:  
 Ճի վրա, թաքուն-թաքուն,  
 Շոթի տիրոջ կատուն  
 . է ցատքում,  
 Պարկում...



Բայց հէնց կատւի ցատքելու հետ  
Հովւի շունը իսկոյն և եթ  
Հափ է անում,  
Վեր է կենում,  
Խեղճ փիսիկին  
Դընում տակին  
Չեռաց խեղդում  
Ու շըպթում:



«ԽԵՂԳԵց, ԽԵՂԳԵց, ՎԱՅ, Իմ Կատուն.  
Այ սատկես գու, շան որդու շուն»,  
Բարկանում է խանութպանը  
Ու ձեռն ընկած մօտիկ բանը  
Տուր՝ թէ կլտաս շան ճակատին,  
Շուռ է տալի կատւի կողքին».



—Վայ, ձեզ մատաղ, ասլան շունըս,  
իմ ապլուստը՝, տեղը՝ս, տունը՝ս...  
Տունըդ քանդւի, այ խանութպան,  
Անխիղճ, վրբ, չար, ֆռան, ֆրստան,  
Ո՞նց թէ գու իմ շանը զարկես,  
Դէ, զարկելը հիմի գու տես...  
Գոռում է մեր աժդահակը,  
Մեծապլուխ իր մահակը  
Ետ է տանում ու ցած բերում,  
Խանութպանին շէմքում փոռում:



—Սպանեցի՞ն... հայ, օգնութիւն...  
Ու թաղից թաղ, ու տանից տուն  
Զէն է տալի մէկը միւսին.  
—Հայ, օգնութիւն... սպանեցի՞ն...  
  
Վերի թաղից, ներքի թաղից,  
Ճամփի վըրից, գործի տեղից,  
Ճիշով, լալով,  
Հարայ տալով—  
Էլ հէրն ու մէր,  
Քիր ու ախպէր,  
Կին, երեխէր,  
Ընկեր տըղէր,  
Չոքանչ, աներ,  
Քաւոր, անհէր,  
Քեռի, փեսայ...  
  
Ինչ իմանաս էլ՝ ով է սա,  
Գալիս են ու անվերջ գալիս,  
Ով գալիս է՝ տուր թէ տալիս.  
—Տօ, կոպիտ արջ, տօ, վայրենի,  
Էս տեսակ էլ բան կըլինի.  
Դու առուտուր եկար անես,  
Թէ իր շէմքում մարդ սպանես...



Մին ասում են—տասը զարկում,  
Աղջան անում, մէջտեղ ձրգում  
Իր շան կողքին երկար ու մէկ:  
—Դէ, ձեր մեռելն եկէք տարէք:  
Ու էստեղից բօթը դընում,  
Գընում մօտիկ գիւղն է հասնում.  
—Հէյ, օգնեցէք,

Մեռած հօ չէք,  
Սպանեցին մեր գիւղացուն...

Ինչպէս շընաճանճի մի բուն  
Քանդես, թողնես,  
Էն ճանճի պէս  
Ամբողջ գիւղով օրդու կապում,  
«Բուհ» են անում, դուրս են թափում  
Ամեն մինը առած մի բան.

Որը ձեռին մի հրացան,  
Որը եղան, ցաքատ կամ սուր,  
Որը թի, բահ, որը շամփուր,  
Որը կացնով, որը փէտով,  
Որը ձիով, որը ոտով,  
Որն անգրտակ, որը բորիկ—  
Դէպի դուշման գիւղը մօտիկ:  
—Տօ, էսպէս էլ անիրաւ գիւղ.  
Ոչ խիղճ ունեն, ոչ ահերկիւղ.  
Մարդ գնում է առուտուրի  
Հաւաքւում են քաշում սըրի:  
Թոռ ձեր գեղին, միջի մարդին,  
Զեր նամուսին, ձեր աղաթին...  
Գնանք, զարկենք,  
Զարդենք, կրակենք...  
—Հայ, հույ, յառաջ, դէ, ձեզ տեսնեմ...



Ու դուրս եկան իրարու դէմ:  
Հա զարկեցին ու զարկեցին,  
Կոտորեցին, կըրակեցին.  
Ինչքան աւել կոտորեցին,  
Էնքան աւել կատաղեցին,  
Զարդեցին իրար,  
Զընջեցին իրար,  
Կորան, գնացին  
Գետնին հաւասար:



Դու մի ասիլ, մէկը մէկից  
էսքան մօտիկ, սահմանակից  
էս գիւղերը հարկ են տալի  
Ամեն մինը մի արքայի:  
Մի տէրութեան թագաւորը,  
Երբ լսում է էս բոլորը,  
Արձակում է հրովարտակ  
Ժողովրդին իր հըպատակ.  
—Յայտնի լինի մեր տէրութեան,  
Զինւոր, բանւոր, ազնըւական—  
Ամեն շարքին  
Ու աշխարհքին,  
Որ անօրէն ու դաւաճան  
Մեր դրացի ազգը դաժան,  
Երբ մենք քնած էինք սիրով,  
Մեր սահմանը մըտաւ զօրով,  
Ու կոտորեց սուրը ձեռին  
Մեր սիրելի զաւակներին:  
Արդ սըրահար ու հըրակէզ  
Մեր որդիքը կանչում են մեզ,  
Եւ մենք, ընդդէմ մեր խոկ կամքին,  
Պատւէր տւինք մեր բանակին,  
Թընդանօթով մեր աւերող  
Ու Աստուծով մեծակարող,  
Յանուն արդար ու սուրբ ոխի  
Մըտնի հողը մեր ոստիսի:



Միւսը նոյնպէս իրեն հերթին  
Գրեց զօրքին, ժողովրդին.  
—Մարդկանց առաջ և Աստծու,  
Բողոքում ենք մեր զլրացու  
Վարմունքի դէմ և չար, և նենդ,  
Որ՝ ոտքելով ամեն օրէնք,  
Բորբոքում է կոփու ու վէճ  
Հին հարևան ազգերի մէջ,  
Քանդում սիրոյ դաշը կապած:  
Արդ՝ ակամայ մենք ստիպւած,  
Յանուն պատւի, արդարութեան,  
Յանուն թափւած անմեղ արեան,  
Յանուն ազատ մեր աշխարհքի,  
Յանուն Աստծու և իր փառքի—  
Բարձրացնում ենք մեր ձայնն ահա  
Ու մեր սուրը նորա վրա:



Ու սկսւեց կըռիւն ահեղ:  
Շոխնդ, որոտ էստեղ, էնտեղ:  
Կըրակն ընկաւ շէն ու քաղաք,  
Արիւն, աւեր, ճիչ, աղաղակ,  
Ամեն կողմից սարսափ ու բօթ,  
Ամեն հողմից մեռելի հոտ...

Ամառ, ձրմեռ,  
Ողջ տարիներ  
Մշակն անբան,  
Դաշտերն անցան,





Ու, կոփոք չըդադարած,  
Սովոր եկաւ համատարած:  
Սովոր եկաւ—սովի հետ ցաւ,  
Ծաղկած երկիրն ամայացաւ...

Իսկ մնացած մարդիկ իրար  
Հարցնում էին սարսափահար,  
Թէ որտեղից արդեօք ծագեց  
Էս ընդհանուր աղէտը մեծ:

